ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ

1993 թ. Մայիսի 1-4 օրերին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով, Քենթրբերիի Արքեպիսկոպոս Նորին Գերաշնորհություն Դոկտ. Ջորջ Քերին, պաշտոնական այցով ժամանեց Մայր Աթոռ Ս. Էջմիածին, որպես Նորին Սրբության հարգարժան հյուրը:

Քենթրբերիի Արքեպիսկոպոսի շքախմբին մաս էին կազմում Օքսֆորդի եպիսկոպոս Գերաշնորհ Տ. Ռիչարդ Հերիսը և Անգլիկան եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ:

Այս առթիվ Մայր Աթոռ էին հրավիրվել Կ. Պոլսի Հայոց Պատրիարք Նորին Ամենապատվություն Տ. Գարեգին Արքեպիսկոպոս Գազանճյանը և Հայ եկեղեցու հինգ թեմական առաջնորդներ արտերկրից և ութը եպիսկոպոսներ Հայաստանից:

Մայիսի 1-ին, շաբաթ օրը երեկոյան, Ս. Էջմիածնի Վեհարանում, Հայոց Հայրապետը ջերմորեն ողջունեց Անգլիկան եկեղեցու հոգևոր պետին և բարի գալուստ մաղթեց նրան:

Հետևյալ օրը, կիրակի առավոտյան, երկու ֆույր եկեղեցիների պետերը Մայր Տաճարում ներկա գտնվեցին Սուրբ Պատարագի արարողությանը, որի ընթացքում Նորին Սրբության և Քենթրբերիի Արքեպիսկոպոսի միջև փոխանակվեցին ողջույնի խոսքեր:

Նույն օրը Անգլիկան եկեղեցու պատվիրակությունը, ընդառաջելով Շիրակի թեմի առաջնորդ Տ. Գրիգորիս Արքեպիսկոպոսի հրավերին, մեկնեց Գյումրի, որտեղ ներկա եղավ Լորդ Բայրոնի անվան անգլիական թեքումով միջնակարգ դպրոցում կազմակերպված հանդիսությանը: Ապա Արքեպիսկոպոսը հանդիպում ունեցավ քաղաքապետի, թեմական խորհրդի անդամների, ուսանողների և հավատացյալ ժողովրդի հետ: Օրվա վերջում Արքեպիսկոպոսը այցելեց տեղի Ս. Աստվածածին եկեղեցին, որտեղ տեղի ունեցավ համատեղ աղոթք:

Մայիսի 3-ին, առավոտյան, Վեհարանում Անգլիկան և Հայ եկեղեցու ներկայացուցիչների միջև, գլխավորությամբ Վեհափառ Հայրապետի և Քենթրբերիի Արքեպիսկոպոսի, տեղի ունեցավ խորհրդակցություն երկու եկեղեցիները շահագրգռող այժմեական հարցերի շուրջ և այնուհետև ժամը 12-ին ՀՀ Նախագահ Տիար Լևոն Տեր-Պետրոսյանը նախագահական պալատում ընդունեց երկու եկեղեցիների պետերին իրենց շքախմբերով: Այստեղ տեղի ունեցավ մեկ ժամ տևող շահեկան զրույց նախագահի, Նորին Սրբության և Քենթրբերիի Արքեպիսկոպոսի միջև: Ապա Անգլիկան եկեղեցու պատվիրակությունը Վեհափառ Հայրապետի և հայ եկեղեցու հոգևոր դասի ընկերակցությամբ մեկնեց Ծիծեռնակաբերդ, ուր տեղի ունեցավ ծաղկեպսակի զետեղում հայ նահատակաց հուշարձանին և համատեղ հոգեհանգստյան աղոթք:

Ժամը 14-ին Մայր Աթոռի հյուրերն այցելեցին Ս. Գեղարդի վանք: Նույն օրը երեկոյան Հայֆիլհարմոնիայի դահլիճում հյուրերի պատվին կազմակերպվեց համերգ՝ Հոգեշնորհ Տ. Մամիկոն արեղայի (երգեհոն) և Արարատյան թեմի Ս. Սարգիս մանկական երգչախմբի կատարմամբ: Երեկոնան ի պատիվ Քենթրբերիի Արքեպիսկոպոսի և նրա շքախմբի անդամների, Վեհարանում տրվեց ողջերթի ճաշկերույթ:

digitised by A.R.A.R.@

Մայիսի 4-ին, երեքշաբթի օրը առավոտյան, Վեհարանում ֆույր Եկեղեցիների պետերը ստորագրեցին համատեղ մի հաղորդագրություն: Ապա հյուրերը այցելեցին Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան և Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին: Այստեղ նրանց բարիգալստյան խոսք ասաց առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին Արքեպիսկոպոսը: Նույն օրը, հետմիջօրեին, Անգլիկան Եկեղեցու պատվիրակությունը մեկնեց Թբիլիսի:

Քենթրբերիի նորընտիր Արքեպիսկոպոսի սույն այցելությամբ առավել ամրապնդվեցին Հայ և Անգլիկան Եկեղեցիների պատմական կապերը, նոր հեռանկարներ բացելով ապագա եղբայրական գործակցության:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածնի Մայր Աթոռս ուրախ է հաղորդելու մեր Սուրբ Եկեղեցուն և համայն հայ հաւատացեալներին, որ Ռուսաստանի տարածքի վրայ ծաւալուող եկեղեցաշէն գործունէութեան ծանապարհին, արձանագրուեց ևս ազգանուէր մի իրագործում, Մոլդաւիոյ նորակազմ հայ եկեղեցական համայնքում:

Շաբաթ օրը, 19 Յունիսին, մեծ հանդիսութեամբ տեղի ունեցաւ բացումը և օծումը Քիշնև մայրաքաղաքի Ս. Աստուածածին Հայ Առաքելական վերանորոգուած եկեղեցու, ձեռամբ Ռուսաստանի թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրան արքեպիսկոպոս Կիւրեղեանի և ի ներկայութեան խուռներամ հայ հաւատացեալների:

Մոլդաւական Հանրապետութեան նախագահ Տիար Սնեգուրը անձամբ իր ներկայութեամբ պատուեց հանդիսութիւնը և իր ջերմ խօսքով արտայայտեց իր գնահատանքն ու մեծարանքը հայ եկեղեցու և հայ ժողովրդի հանդէպ: Հանդիսութեանց ներկայ էին նաև Մոլդաւիոյ Մշակոյթի և Դաւանանքի նախարար Իոան Ունկուրեանուն և Քիշնևի քաղաքապետը:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

25 Յունիս 1993
Ս. Էջմիածին

digitised by A.R.A.R.@